ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2016 թվականի **թիվ 4** քաղ. Երևան

«Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց.**

Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է) և ներկայացնել այն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի թիվ քաղ.

Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 84-րդ հոդվածի 2-րդ կետին և 104-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

Հաստատել կցվող՝ Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգը:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական բարձրագույն

խորհրդի « » -ի

201 թվականի թիվ որոշմամբ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման

I. Ընդհանուր դրույթներ

Սույն հայեցակարգը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 84-րդ հոդվածի 2-րդ կետի իրագործման նպատակներով և ուղղված է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) կողմից Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումն ապահովելուն:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումն իրականացվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունների միջև առկա՝ միջազգային պայմանագրերով սահմանվող փոխհարաբերություններն ու պարտավորությունները.

անդամ պետությունների ազգային շուկաների գործունեության և զարգացման առանձնահատկությունները.

անդամ պետությունների ներքին սպառողներին առաջնահերթ ապահովումը.

անդամ պետությունների օրենսդրությունը.

ընդհանուր էներգետիկական շուկաների ձևավորման միջազգային փորձը:

II. Հասկացությունները և սահմանումները

Սույն հայեցակարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի հասանելիություն»՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից կառավարվող՝ նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի տրամադրում՝ նավթն ու նավթամթերքները փոխադրելու նպատակով.

«նավթ և նավթամթերքներ»՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնին համապատասխան սահմանված ապրանքներ.

«Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներ»՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների առևտրատնտեսական հարաբերությունների ամբողջություն անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման և իրացման ոլորտում, որոնք անհրաժեշտ են անդամ պետությունների՝ դրանց մասով պահանջները բավարարելու համար.

«բորսային սակարկությունների օպերատոր»՝ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից հաստատված կանոններին համապատասխան՝ նավթի և նավթամթերքների բորսային սակարկությունների անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական անձ.

«նավթապահեստի և պահեստային ենթակառուցվածքի օպերատոր»՝ անդամ պետության տարածքում նավթի և նավթամթերքների պահպանման ծառայություններ մատուցող իրավաբանական անձ.

«անդամ պետության նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգի օպերատոր»՝ անդամ պետության տարածքում նավթի և

նավթամթերքների փոխադրման համակարգով նավթի և (կամ) նավթամթերքների փոխադրման ծառայություններ մատուցող, ինչպես նաև նավթի և նավթամթերքների փոխադրման համակարգի օպերատիվ-կարգավարական կառավարում իրականացնող իրավաբանական անձ.

«նավթ և նավթամթերքներ սպառող»՝ սեփական արտադրական և (կամ) այլ տնտեսական կարիքների համար նավթ և (կամ) նավթամթերքներ ձեռք բերող իրավաբանական անձ.

«նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգ»՝ նավթի և (կամ) նավթամթերքների փոխադրման (վերամղման) համար օգտագործվող մայրուղային խողովակաշարերի և տրանսպորտի այլ տեսակների տրանսպորտային միջոցների ամբողջություն.

«նավթի և նավթամթերքների տարանցում»՝ անդամ պետության տարածքով նավթի և նավթամթերքների տեղափոխում (փոխադրում), որոնց ուղարկման և նշանակման կետերը գտնվում են այդ անդամ պետության տարածքից դուրս.

«նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրում»՝ նավթի և նավթամթերքների տեղափոխմանն ուղղված գործողություններ իրականացնելը ցանկացած եղանակով, այդ թվում՝ խողովակաշարային տրանսպորտի օգտագործմամբ՝ ուղարկողից դրա ընդունման կետից մինչև ստացողին հանձնելու կետը՝ ներառյալ դատարկելը, լցնելը, այլ փոխադրամիջոցի վրա փոխաբեռնելը, պահելը, խառնելը.

«Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակից»՝ անդամ պետության տարածքում գրանցված և անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, մատակարարման, վերամշակման և իրացման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտ, ինչպես նաև նավթ և նավթամթերքներ սպառող:

Սույն հայեցակարգում օգտագործվող այլ հասկացություններ ընկալվում են Պայմանագրում ներկայացված իմաստներով:

III. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման նպատակներն ու խնդիրները

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումն իրականացվում է հետևյալ նպատակներով՝

անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման, էներգետիկական և բնապահպանական անվտանգության ապահովում՝ հաշվի առնելով անդամ պետությունների՝ նավթի և նավթամթերքների պահանջների առաջնահերթ բավարարումը.

անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման ու իրացման ոլորտում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների գործունեության տնտեսական արդյունավետության և անդամ պետությունների վառելիքաէներգետիկական համալիրների աշխատանքի հուսալիության բարձրացում.

միջազգային շուկայում անդամ պետությունների և առհասարակ Միության տնտեսական ինտեգրման ու մրցունակության մակարդակի բարձրացում:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման խնդիրներն են՝

անդամ պետությունների տնտեսությունների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.

բորսային առևտրի մեխանիզմների ստեղծման (այդ թվում՝ Միության բորսային ապրանքների շուկայի ձևավորման), Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարման ու գործունեության ապահովման կառույցների փոխգործակցության սկզբունքների սահմանման միջոցով Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների միջև նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտրի շուկայական մեխանիզմների արդյունավետության զարգացումն ու բարձրացումը.

բորսային ապրանքների՝ շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացումը, Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների՝ անդամ պետությունների շուկաների ոչ խտրական հասանելիության ապահովման համար պայմանների ստեղծումը (այդ թվում՝ էլեկտրոնային բորսային և արտաբորսային ինստիտուտների ստեղծումը)՝ գերակայության կարգով հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսությունների շահերը.

անդամ պետությունների միջև նավթի և նավթամթերքների սպառման, անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման ու իրացման մասին տվյալների տեղեկատվական փոխանակման ապահովումը.

նավթի և նավթամթերքների նկատմամբ գնագոյացման թափանցիկության բարձրացումը.

նավթի և նավթամթերքների համար հաշվարկներում ազգային արժույթների օգտագործման հարցի քննարկումը.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կայուն գործունեությունն ապահովելու նպատակով տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացումը.

առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման գործող համակարգով, այդ թվում՝ մայրուղային նավթամուղների ու նավթամթերքների խողովակաշարերի համակարգերով նավթի և նավթամթերքների երկարաժամկետ տրանսպորտային փոխադրման երաշխավորված իրականացման ապահովումը.

անդամ պետությունների նավթին և նավթամթերքներին առնչվող նորմերի ու չափանիշների, ինչպես նաև նավթի և նավթամթերքների շրջանառության հետ կապված պահանջների միասնականացումը:

IV. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման սկզբունքները

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումն իրականացվում է՝ ելնելով Պայմանագրով սահմանված հետևյալ հիմնական սկզբունքներից՝

նավթի և նավթամթերքների նկատմամբ շուկայական գնագոյացման ապահովում՝ բացառությամբ նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների այն ծառայությունների, որոնց առնչությամբ գնագոյացումը ձևավորվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

Միության նավթի և նավթամթերքների շուկաներում բարեխիղճ մրցունակության զարգացման ապահովում՝ բացառությամբ նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների այն ծառայությունների, որոնց առնչությամբ գնագոյացումը ձևավորվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

նավթի և նավթամթերքների, համապատասխան սարքավորումների, տեխնոլոգիաների և դրանց հետ կապված ծառայությունների առևտրում եղած տեխնիկական, վարչական և այլ խոչընդոտների բացակայություն.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների առևտրային ու տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման ապահովում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար ոչ խտրական պայմանների ապահովում.

անդամ պետությունների նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման ու իրացման ոլորտներում ներդրումներ ներգրավելու համար բարենպաստ պայմանների ստեղծում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների տեխնոլոգիական և առևտրային ենթակառուցվածքի գործունեության ազգային նորմերի ու կանոնների ներդաշնակեցում.

փոխադարձ առևտրում քանակական սահմանափակումների և արտահանման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) չկիրառում.

անդամ պետությունների՝ նավթին և նավթամթերքներին առնչվող պահանջների առաջնահերթ բավարարում.

անդամ պետությունների՝ նավթին և նավթամթերքներին առնչվող նորմերի ու չափանիշների միասնականացում.

բնապահպանական անվտանգության ապահովում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների տեղեկատվական ապահովում:

Անդամ պետությունները զարգացնում են փոխշահավետ համագործակցություն Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ՝ հաշվի առնելով նաև հետևյալ սկզբունքները՝

իրավահավասարության, փոխշահավետության և որևէ անդամ պետության տնտեսական վնաս չհասցնելու վրա հիմնված համագործակցություն.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների տնտեսական շահերի, այդ թվում՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի այն սուբյեկտների շահերի հավասարակշռության պահպանում, որոնք ապահովում են նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ոլորտում իրենց կողմից մատուցվող ծառայություններին ոչ խտրական հասանելիություն և սպառողների համար այդ ծառայությունների որակի պատշաճ մակարդակ, ինչպես նաև նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի արդյունավետ գործունեություն ու զարգացում.

նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնի գոյացում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

շուկայական հարաբերությունների և մրցակցության վրա հիմնված մեխանիզմների առաջնահերթ օգտագործում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում պահանջարկը և առաջարկը բնութագրող տեղեկատվության թափանցիկության բարձրացում:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման նշված սկզբունքները չեն տարածվում անդրսահմանային խողովակաշարերի հարցերով ավելի վաղ կնքված միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում առաջացող իրավահարաբերությունների վրա:

V. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտները

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների կազմի մեջ են մտնում՝

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցները.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ենթակառուցվածքային կազմակերպությունները:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ենթակառուցվածքային կազմակերպությունների կազմի մեջ են մտնում՝

անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերին, նավթապահեստներին ու պահեստային ենթակառուցվածքին տիրապետող իրավաբանական անձինք.

անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորները.

նավթապահեստների և պահեստային ենթակառուցվածքի օպերատորները.

անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների ու նավթապահեստների և պահեստային ենթակառուցվածքի օպերատորների հետ փոխգործակցության միջոցով նավթի և նավթամթերքների բորսային առևտրի իրականացման ժամանակ կնքված պայմանագրերի կատարումն ապահովող բորսային սակարկությունների օպերատորները.

անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների, նավթապահեստների ու պահեստային ենթակառուցվածքի օպերատորների և բորսային սակարկությունների օպերատորների փոխգործակցությունն ապահովող այլ կազմակերպություններ:

VI. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեությունը

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեությունն ուղղված է Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների տնտեսական շահերի հավասարակշռության պահպանման ապահովմանը:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաները գործում են Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաները կարգավորող՝ Միության իրավունքի հիման վրա՝ հաշվի առնելով Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման փուլերին համապատասխան սահմանվող առանձնահատկությունները:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության շրջանակներում կիրականացվի գործունեություն հետևյալ ուղղություններով՝

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների միջև նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտուր՝

ըստ երկկողմ և այլ պայմանագրերի.

բորսային սակարկություններով:

Բորսային սակարկությունների ժամանակ՝ նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտուրն իրականացվում է Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների կողմից՝ առևտրի էլեկտրոնային համակարգերում՝ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաները կարգավորող ակտերին համապատասխան (այն դեպքերում, երբ Միության շրջանակներում օգտագործվում է միասնական առևտրային հարթակ), և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

այն նավթի և նավթամթերքների տարանցման և (կամ) այն նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ապահովում, որոնք՝

տեղափոխվում են մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածքով՝ անդամ պետությունների կողմից ներքին սպառման համար և (կամ) Միության տարածքից արտահանման համար.

տեղափոխվում են երրորդ պետությունների տարածքից անդամ պետության տարածքով՝ անդամ պետությունների կողմից ներքին սպառման համար և (կամ) Միության տարածքից արտահանման համար.

մի անդամ պետության տարածքում նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման և իրացման ոլորտում մյուս անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեության իրականացում (այդ թվում՝ համատեղ նախագծերի իրագործում).

նավթին և նավթամթերքներին առնչվող նորմերի և (կամ) ստանդարտների միասնականացման համար գործունեության իրականացում՝ հաշվի առնելով Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների տնտեսական շահերի հավասարակշռության պահպանումը:

VII. Նավթային ոլորտում միջազգային համագործակցության և միջպետական ենթակառուցվածքի զարգացումը

Անդամ պետությունների էներգետիկական անվտանգությանն աջակցելու ու նավթի և նավթամթերքների համաշխարհային շուկաներում դրանց դիրքերն ամրապնդելու նպատակով անդամ պետությունները՝

ձևակերպում են նավթի և նավթամթերքների տարանցման ոլորտում փաստաթղթերի մշակման առաջարկներ, որոնցով հաշվի են առնվում անդամ պետությունների ազգային շահերը.

նպաստում են նավթային ոլորտում խոշոր անդրսահմանային ներդրումային նախագծերի իրագործմանը.

աջակցում են անդամ պետությունների նավթային ճյուղի ավելի արդյունավետ դիրքավորմանը և արժեքի ստեղծման գլոբալ շղթաների օգտագործմանը՝ նավթի արդյունահանումից մինչև նավթի և նավթամթերքների մշակումն ու իրացումը, երրորդ պետություններից անդամ պետությունների տարածքով նավթի և նավթամթերքների տարանցման ծավալների մեծացումը.

ձևավորում են ենթակառուցվածքային, ֆինանսատնտեսական և տեխնիկատեխնոլոգիական պայմաններ նավթի և նավթամթերքների միջազգային առևտրում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունն ընդլայնելու համար:

VIII. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության կարգավորումն ու ապահովումը

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության կարգավորումն իրականացվում է Միության իրավունքին և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան և ներառում է՝

նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորում, հակամենաշնորհային կարգավորում, մաքսասակագնային կարգավորում, հարկային կարգավորում.

ժամկետային շուկայի (բորսային և արտաբորսային) կարգավորում, տեխնիկական կանոնակարգում.

նավթի և նավթամթերքների բորսային սակարկությունների կարգավորում:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ու գործունեության նպատակով անդամ պետություններն ապահովում են անդամ պետությունների կարգավորող մարմինների ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների փոխգործակցությունը:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության ապահովման շրջանակներում իրականացվում է՝

Միության մարմինների ակտերի և անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի ընդունում կարգավորման նշված ոլորտներում.

անդամ պետությունների կողմից Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ու գործունեության տեխնոլոգիական և կարգավորչական ապահովման մասով պետական քաղաքականության մշակում ու իրագործում.

անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների գործունեության համակարգում.

կարգավորող հատուկ միջպետական մարմինների կողմից համատեղ նախագծերի իրագործման համակարգում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների օժանդակ մարմինների ստեղծում ու գործունեության ապահովում:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության պայմաններում անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների փոխգործակցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտրի ու տարանցման շրջանակներում նավթի և նավթամթերքների միջպետական տրանսպորտային փոխադրումն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակման կազմակերպում.

միջպետական խողովակաշարային համակարգերի թողունակության և աշխատանքի հուսալիության վրա ազդող նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի տարրերի վերանորոգման ժամանակացույցների մասին փոխադարձ տեղեկացում.

նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի զարգացման պլանների մասին փոխադարձ տեղեկացում՝ անդամ պետությունների զարգացման ծրագրերին համապատասխան:

Անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորներն իրականացնում են անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատիվ-կարգավարական կառավարում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում բորսային սակարկությունների օպերատորների փոխգործակցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների միջև նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտուր բորսային սակարկություններին.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների միջև հաշվարկների ապահովում.

նավթի և նավթամթերքների մատակարարումն ապահովելու համար բորսային սակարկություններին Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների միջև նավթի և նավթամթերքների փոխադարձ առևտրի իրականացման ժամանակ անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների և նավթապահեստների ու պահեստային ենթակառուցվածքի օպերատորների փոխգործակցություն:

IX. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում գնագոյացման մեխանիզմները

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում գնագոյացման մեխանիզմները ձևավորվում են՝ հաշվի առնելով անդամ պետությունների շուկաներում առկա գնագոյացման մեխանիզմներն ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման փուլերը:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում գնագոյացումը ձևավորվում է շուկայական մեխանիզմների ու բարեխիղճ մրցակցության հիման վրա: Գնագոյացման թափանցիկությունն ապահովելու նպատակով ձևավորվում են բորսային և արտաբորսայական շուկայի օբյեկտիվ գնային ցուցիչներ՝ արտաբորսայական շուկայի պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և մշակման մեխանիզմների հետ մեկտեղ: Գնագոյացման սկզբունքներն ընդհանուր են՝ անկախ տնտեսավարող սուբյեկտի պատկանելիությունից այս կամ այն անդամ պետությանը:

Նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերով նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ծառայությունների

սակագները կարգավորելիս անդամ պետություններն առաջնորդվում են «Նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կազմակերպման, կառավարման, գործունեության և զարգացման կարգի մասին» արձանագրության 7-րդ կետով (Պայմանագրի 23-րդ հավելված), որով սահմանվում է, որ՝

նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերով նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ծառայությունների սակագները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ծառայությունների սակագները սահմանվում են այնպիսի մակարդակի վրա, որը չի գերազանցում այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված սակագները, որի տարածքով իրականացվում է նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրումը.

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման ծառայությունների սակագների սահմանումն այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված սակագներից ցածր սակագներով, որի տարածքով իրականացվում է նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրումը, անդամ պետությունների պարտավորությունը չէ։

X. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների դիտանցումը և տեղեկատվական ապահովումը

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների դիտանցումն ու տեղեկատվական ապահովումն իրագործվելու են Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում, որն ստեղծվելու է «Եվրասիական

տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների և տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 3-րդ կետին համապատասխան (Պայմանագրի 3-րդ հավելված):

Անդամ պետությունների նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի օպերատորների միջև տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակումն իրականացվելու է դրանց միջև փոխադարձ պայմանավորվածությամբ՝ նավթի և նավթամթերքների անխափան միջպետական տրանսպորտային փոխադրումն ապահովելու համար անհրաժեշտ ծավալով:

Նախատեսվում է Միության ընդհանուր տեղեկատվական տարածքի ստեղծում, այդ թվում՝ Միության նավթի և նավթամթերքների ֆինանսական շուկաների ու ընդհանուր շուկաների գործունեության հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության փոխադարձ տրամադրում:

Նավթի և նավթամթերքների համաշխարհային շուկաներում գների դինամիկայի դիտանցման համար օգտագործվում են տեղեկատվության տարբեր աղբյուրներ:

Անդամ պետություններն ստեղծում են տեղեկատվության փոխանակման համակարգ՝ տրանսպորտի բոլոր տեսակներով նավթի և նավթամթերքների մատակարարումների, արտահանման ու ներմուծման մասին տեղեկություններ պարունակող մաքսային տեղեկատվության հիման վրա:

XI. Ներդրումները

Անդամ պետություններն աջակցում են անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, տրանսպորտային փոխադրման, մատակարարման, վերամշակման և իրացման ոլորտներում ներդրումների ներգրավմանը՝ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ու զարգացման նպատակով:

Համատեղ գործունեության շրջանակներում անդամ պետություններն աջակցում են՝

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներում բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանը և փոխադարձ ներդրումների խրախուսմանն ու պաշտպանությանը.

տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացմանը:

XII. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաները կարգավորող ակտերը

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաները կարգավորող ակտերի համակարգի մաս են կազմում՝

Պայմանագիրը.

Միության շրջանակներում Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման մասին, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոններ պարունակող, Պայմանագրի 84-րդ հոդվածի 3-րդ կետին ու 104-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան կնքվող միջազգային պայմանագիրը.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների գործունեությունը սահմանող և Պայմանագրի 84-րդ հոդվածի 2-րդ կետով ու 104-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված՝ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ծրագրին համապատասխան մշակվող Միության մարմինների ակտերը:

XIII. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարումն ու դրանց գործունեության ապահովումը

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման և զարգացման շրջանակներում իրականացվում է Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարման և գործունեության ապահովման կառույցների ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների փոխգործակցություն:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարման ու գործունեության ապահովման կառույցների կազմի մեջ են մտնում՝

անդամ պետությունների՝ նավթի և նավթամթերքների շուկաների կարգավորման համար լիազորված պետական մարմինները.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մարմինները (անդամ պետությունների պետական մարմինների ղեկավարների խորհուրդ, աշխատանքային խմբեր, հատուկ հանձնաժողովներ), որոնք կարող են ձևավորվել անդամ պետությունների պետական մարմինների, Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ենթակառուցվածքային կազմակերպությունների փոխգործակցությունն ապահովելու համար:

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կառավարման և գործունեության ապահովման կառույցների ու Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների սուբյեկտների փոխգործակցությունը ներառում է՝

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների զարգացման հարցերով համաձայնեցված առաջարկների մշակում.

Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեության դիտանցման կազմակերպում.

բորսային սակարկություններին Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների մասնակիցների կողմից առևտրային գործողությունների իրականացման ժամանակ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների գործունեությունն ապահովող տեղեկատվական համակարգերի, այդ թվում՝ էլեկտրոնային համակարգի գործունեություն և փոխգործակցություն:

XIV. Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման փուլերը

Պայմանագրի 84-րդ հոդվածին համապատասխան՝ անդամ պետություններն ապահովում են Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումը՝ հետևյալ փուլերին համապատասխան՝

I փուլ (2016 - 2017 թվականներ)՝ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ծրագրի մշակում և հաստատում.

II փուլ (2018 - 2023 թվականներ)՝ Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ծրագրի միջոցառումների կատարում, անդամ պետությունների տարածքներում տեղակայված նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերին հասանելիության միասնական կանոնների մշակում.

III փուլ (2024 թվական)՝ Միության շրջանակներում Միության նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման մասին, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոններ պարունակող միջազգային պայմանագրի կնքում և ուժի մեջ մտնելը: